նութիւնը։ Քաղաքական ղեկավար մարմինը, այսպիսի ահաւոր վայրկեանին, երբ ամենքս կանգնած ենք անդունդի եզերքին, իրաւունք չունի կորցնելու հաւասարակշռութիւնը, իրաւունք չունի դրաղելու միմեանց դէմ ամբաստանագրեր պատրաստելով։ Մեզանից ամէն մէկը պատասխանատու է ո՛չ միայն իր համար, այլ և հայերի, մահմետականների ու վրացիների — մենք պատասխանատու ենք ամբողջ ազգաբնակութեան համար։ Մենք չպէ՛տք է դուրս գանք, իբրև միմեանց մեղադրողներ. մենք հանդէս պէտք է գանք, որպէս դաղափարական քաղաքական մի մարմին, որը այս յուդումնալից վայրկեանին կոչուած է փրկելու երկիրը։ Ես կոչ եմ անում պաղարիւնութեան ու սեփական պարտքի գիտակցութեան»։

Ի՞նչ ազնիւ խօսքեր, որոնք, սակայն, հնչում էին անապատի մէջ։ Գազանական տարերքը խլել էր ամենքի ականջները։

Ուլուխանլուի և Ղամարլուի դէպքերի վրա, Երևան մեկնեց մի ուրիշ պատուիրակութիւն, այս անդամ Սէյմի կողմից, որի նախագահ Գէորգաձէն Սէյմի մարտ 7-ի նիստում ներկայացրեց մանրամասն զեկուցում, որի մէջ, ի միջի այլոց, ասում էր. «Երևակայեցէք երկաթուղին, որի վրա մի ժամանակ եռում էր կեանքը, սուլում էին շոգեշարժները, գործում էին արհեստանոցները, տրւում էին հեռագրներ, ժողովուրդը օգտւում էր քաղաքակրթութեան պտուղներից։ Իսկ այժմ այդ երկաթուղու վրա ոչի՛նչ չէք գտնի. չկան կայարաններ, չկան շէնքեր, ամէն ինչ թալանուած է, ամէն բան փչացած, կայարաններում չէք տեսնի ո՛չ մի կենդանի էակ, ո՛չ մի ծառայող — ամէն ոք հեռացել-կորել է, ոչինչ չի մնացել։ Այս վիճակում են գտնւում Ուլուխանլու, Արարատ և ուրիշ կայարանները։ Պատուիրակութեան ունեցած տեղեկութիւններով դէպի Ջուլֆա տանող գծի վրա կանգուն է մնացել միայն Ղամարլու կայարանը, ուր կանգնած է հայկական մի հարիւրեակ։ Այս վիճակում գտնւող երկաթուղու վրա, որև է շարժում, զօրամասերի որև է փոխադրութիւն — ինչ զօրամաս էլ ուզում է լինի՝ ռուս, թէ հայ—բոլորովին անհնար է։ Ճիշտ է, երկաթգծերը դեռ հանուած չեն, փայտեղէն մասը դեռ իր տեղումն է, բայց կատարելապէս անմարդաբնակ են և ճիշտ է թափւում, որ այդպէս էլ մնան։ Եթէ այդ ճանապարհով անցնելու լինէք, ճանապարհի երկու կողմը կը տեսնէք փորւած դիրքերում նստած քրդեր կամ մահմետականներ։ Երբ մենք մօտենում էինք մի աւերւած ու քար ու քանդ արւած կայարանի, կայարանում և ուրիշ շէնքերում նկատեցինք ինչ որ զինուած մարդկանց։ Մահմետականների պատուիրակութիւնը իջաւ վագոնից, մօտեցաւ այդ զինուած անձանց և հարցրեց. ի՞նչ կայ, ինչո՞ւ են նստած այստեղ։ Զինուած մարդիկ սկզբում հեռացան մի կողմ, ապա յետ եկան և բացատրեցին, որ իրենք քրդեր են և եկել են տանելու մնացած դերաններն ու իրերը։ Եւ երբ քիչ հեռու տեսանք զինուած մի հրոսախումբ, պատուիրակութիւնը ստիպուած էր դառնալ յետ, բայց այդ զինուած ամբոխը սպիտակ դրօշակը ձեռքին հասաւ ու յայտնեց, որ այդ կամուրջները այրել են ոչ թէ իրենք՝ մահմետականները, այլ քրդերը»։

Սակայն, «Պատուիրակութիւնը լսեց և այլ կարգի դանգատներ. հայկական զօրամասերը ճակատ են դնում. ճակատում թողնուած է հսկայական, բազմամիլիոն արժէք ունեցող դոյք. այդ դոյքը սեփականութիւն է կազմում Անդրկովկասում ապրող բոլոր ժողովուրդների — և՛ հայերի, և՛ մահմետականների ու վրացիների, այդ պատճառով, հայ զօրամասերը, որոնք գրաւում են այդ դոյքը և յայտարարում են իրենց սեփականութիւն, չպէ՛տք է թոյլատրւեն անցնելու ռազմաճակատ»... Այն օրը, որ մեր պատուիրակութիւնը հասաւ Երևան, շտապով հայերից ու մահմետականներից բաղկացած